ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացված են պատմություն դասավանդող ուսուցիչների կամավոր ատեստավորման քննության թեստի կառուցվածքը, առաջադրանքների տիպերը և կառուցվածքային տեսակները, առաջադրանքների նմուշներ, գնահատման չափանիշները, առաջադրանքներում ընդգրկվող ծրագրային նյութի շրջանակները և գրականության ցանկը:

1. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը կազմված է 60 առաջադրանքներից, որոնց ճիշտ լուծումից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

Առաջադրանքները կառուցվածքային առումով երկու տեսակի են՝ ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Առաջադրանքի տեսակը		Քանակը	Միավորը
1. Ընտրովի պատասխանով		45	45
2. Կարճ պատասխանով	1-ին տեսակ	12 (մեկ պահանջով)	12
	2-րդ տեսակ	3 (7 իրադարձություն, անուն և այլն)	3
Ընդամենը		**60**	**60**

2. ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ընտրովի պատասխանով առաջադրանքները հետևյալ 5 տիպերն են՝

1. *սկզբնաղբյուրների* իմացությունը և դրանք վերլուծելու ու գնահատելու կարողությունները ստուգող առաջադրանքներ,
2. *տերմինների ու հասկացությունների* իմացությունը և մեկնաբանելու կարողությունները ստուգող առաջադրանքներ,
3. *փաստարկների ու պնդումների* համադրման և խմբավորման կարողությունները ստուգող առաջադրանքներ,
4. *իրադարձությունների, երևույթների պատճառների և հետևանքների* իմացությունը և դրանք վերլուծելու, մեկնաբանելու և գնահատելու կարողությունները ստուգող առաջադրանքներ,
5. *իրադարձությունների, երևույթների, անունների և այլնի ժամանակագրական հաջորդականության* իմացությունը և դասավորելու կարողությունները ստուգող առաջադրանքներ:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

3. ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Այս առաջադրանքները նույնպես ներկայացվում են վերը թվարկված 5 տիպերով:
Կարճ պատասխանով առաջադրանքները երկու տեսակի են:

- **մեկ պահանջով առաջադրանքներ.** տրվում են 7 տերմինների կամ հասկացությունների բացատրություններ, պատճառահետևանքային կապերի վերաբերյալ մեկնաբանություններ և վերլուծություններ, պատմական փաստարկներ, պնդումներ և այլն: Դրանցից առաջադրանքի պահանջին համապատասխանում են մի քանիսը:
  Միայն բոլոր ճիշտ պատասխանները նշելու դեպքում է առաջադրանքի կատարման համար քննության մասնակիցը 1 միավոր վաստակում: Մնացած դեպքերում միավոր չի տրվում:
- **Կարճ-վանդակավոր պատասխանով առաջադրանքները** պահանջում են կատարել ժամանակագրական հաջորդականությամբ դասավորություն: Տրված են 1-7 համարակալված իրադարձություններ: Անհրաժեշտ է կատարել ճիշտ դասավորում:
  Առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր, սխալ կամ ոչ ամբողջական պատասխանի դեպքում միավոր չի տրվում:

4. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

1. Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք հարցին:

«Նա հավատարիմ պահապանն էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:

Հայոց թագավորներից ո՞ւմ է այսպես բնութագրել պատմիչը:

1) Պապ
2) Տիգրան I Երվանդյան
3) Սանատրուկ
4) Արտաշես I

Որպես ճիշտ պատասխան պետք է նշել 3-ը:

2. Տերմինների և հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են սխալ:
(1 միավոր)

1. Հայկական հելլենիզմի պատմության երկրորդ փուլը կոչվում է «ուշ հելլենիստական» ժամանակաշրջան:
2. Վանի թագավորության շրջանում օգտագործված սեպագիրը կոչվում էր հիերոգլիֆ:
3. Վանի թագավորությունում գործում էր Ավագների խորհուրդը, որի անդամները համարվում էին արքայի «խորհրդականներ»:
4. Հայկազուն-Երվանդականների օրոք զորքի գերագույն հրամանատարը կոչվում էր գլխավոր սպարապետ:
5. Ասորեստանյան բնագրերում հիշատակվող Հայկական լեռնաշխարհի՝ մինչ օրս հայտնի առաջին վաղ պետական կազմավորումը կոչվում է Արատտա:
6. Ըստ հայկական ավանդազրույցի՝ Հայկ նահապետի ժառանգներից Արամ նահապետի անունից առաջացել է Հայաստանի «Արմենիա» անվանումը:
7. Հնդեվրոպական նախահայրենիքն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհը, Միջին Ասիան, Միջագետքի և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները:

Որպես ճիշտ պատասխան պետք է նշել՝ 2,4,5,7:

5. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ

Թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներն ու ծրագրերը և դրանց համապատասխան գրված 10-12-րդ դասարանների դասագրքերը (ներառյալ՝ քննական ծրագրում ընդգրկված թեմաներին/պարագրաֆներին վերաբերող աղբյուրագիտական, փաստական և հանրամատչելի նյութերը (բացի QR նշանի տակ դրված նյութերից), հավելվածները և բառարանները):

1. Հայոց պատմություն, 10-րդ դասարան. ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, «Զանգակ» հրտ., Երևան, 2021:
2. Հայոց պատմություն, 11-րդ դասարան. ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, «Զանգակ» հրտ., Երևան, 2022:
3. Հայոց պատմություն, 12-րդ դասարան. ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, «Զանգակ» հրտ., Երևան, 2023:
4. Համաշխարհային պատմություն, հանրակրթական ավագ դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք, խմբագիրներ՝ Ա. Քոսյան, Ա. Նազարյան, «Զանգակ» հրտ., Երևան, 2024:
5. Համաշխարհային պատմություն, հանրակրթական ավագ դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք, խմբագիրներ՝ Ա. Քոսյան, Ա. Նազարյան, «Զանգակ» հրտ., Երևան, 2025:
6. Համաշխարհային պատմություն, 12-րդ դասարան. ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, «Զանգակ» հրտ., Երևան, 2023:

6. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ

1. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա ՄԱՍ	Բաժին 1, Նախնադարյան հասարակությունը Հայաստանի տարածքում
Բ ՄԱՍ	Բաժին 3, Հայոց քաղաքակրթությունը ուշ միջնադարում
Գ ՄԱՍ	Բաժին 2, գլուխ 1. Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը
Գ ՄԱՍ	Բաժին 3, գլուխ 3. Հայկական գաղթավայրերի դերը հայապահպանության և մշակույթի զարգացման գործում
Դ ՄԱՍ	Բաժին 1, գլուխ 3. 2. Սոցիալիստական հասարակարգի հակասությունների սրումը /12-րդ դասարան/
Դ ՄԱՍ	Բաժին 2, գլուխ 1. 2. Սոցիալ-տնտեսական դրությունը
Դ ՄԱՍ	Բաժին 3, գլուխ 3. Հայկական սփյուռքը արդի փուլում
Դ ՄԱՍ	Բաժին 4, գլուխ 3. Հայկական մշակույթի արդի վիճակը

2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

10-րդ դասարան	
ԹԵՄԱ 2	3. Աքեմենյան Իրան. քաղաքակրթական ձեռքբերումները
ԹԵՄԱ 2	5. Չինաստան. քաղաքակրթական ձեռքբերումները և արդի հիմնախնդիրները
ԹԵՄԱ 2	6. Հնդկաստան. քաղաքակրթական ձեռքբերումները և արդի հիմնախնդիրները
ԹԵՄԱ 3	3. Պելոպոնեսյան պատերազմները. քաղաքակրթական ճգնաժամը Հին Հունաստանում
ԹԵՄԱ 4	2. Կաթոլիկ եկեղեցին և քրիստոնեական հասարակության ձևավորումը Արևմտյան Եվրոպայում
ԹԵՄԱ 4	6. Չինական հասարակության արժեհամակարգի ձևավորումը միջնադարում
ԹԵՄԱ 4	7. Հնդկաստանի հասարակությունը միջնադարում
ԹԵՄԱ 5	1. Մոնղոլ-թաթարական քոչվորական հասարակությունը դառնում է «Եվրասիական տերություն»
ԹԵՄԱ 5	4. Թյուրքական ցեղերը Առաջավոր Ասիայում: Օսմանյան տերությունը
ԹԵՄԱ 5	5. «Մինչկոլումբոսյան ամերիկյան» հասարակությունները
ԹԵՄԱ 6	3. Հասարակական փոփոխությունները, առօրյա կյանքն ու կենցաղավարությունը
11-րդ դասարան	
ԹԵՄԱ 1	5. Կարոլինգյան կայսրություն
ԹԵՄԱ 1	10. Ցին կայսրությունը
ԹԵՄԱ 2	16. Ազգային պետությունների առանձնահատկությունները
ԹԵՄԱ 2	17-18. Սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրը. քաղաքակրթական ժառանգությունը
ԹԵՄԱ 4	26. Ժողովրդավարական պետությունները և արդիականությունը
ԹԵՄԱ 6	31. Կրոնական գաղափարախոսություն
ԹԵՄԱ 6	33. Ազգային (ազգայնական) և ազգայնամոլական գաղափարախոսություն
ԹԵՄԱ 6	34. Դասակարգային գաղափարախոսություններ
ԹԵՄԱ 6	36. Մշակութային ուղղություններ
12-րդ դասարան	
ԲԱԺԻՆ Ա	Գլուխ 1. Հետարդյունաբերական հասարակության ձևավորումը
ԲԱԺԻՆ Ա	Գլուխ 2, 4. Ազգերի ինքնորոշման հիմնախնդիրն ու չճանաչված պետությունները
ԲԱԺԻՆ Ա	Գլուխ 2, 5. Աշխարհի ժողովրդավարացման գործընթացը
ԲԱԺԻՆ Ա	Գլուխ 3, 2. Քաղաքակրթության զարգացման հեռանկարները XXI դարում